


YunSmpr



# ԿԱՄՈՒՐՁ

ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

ԵՐԿՐՈՐԴ ՏԻՄ

معارف عموميہ نظارت جلیلستانک ۲۷ ربع الاول ۳۰۰  
و ۲۴ کانون ثانی ۹۸ تاریخی و ۹۵۶ نومروی  
رخصتname سبله نشر اونشدر  
مصارف آمریقان مسیلوز شرکتی طرفندن تسویہ  
اولندرق طبع اونشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՑԱԿՈԲ ՊՈՅԱԶԵԱՆ

891.99  
4-18  
1889

67

2011.

891.99

1-18

# ԿԱՄՈՒՐՃ

ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ

-••••-

Ճանապարհորդ մը իւր ճամբորդութեան  
մէջ շատ այգիներու եւ պարտէզներու մէջ-  
տեղ գեղեցկաչէն քաղաք մը եկաւ : .Տե-  
րեւախիտ ծառեր անոր լայն եւ ընդար-  
ձակ փողոցները կը հովանաւորէին : Հա-  
րուստներուն առւները մեծ էին եւ հեշտ,  
աղքատներունն ալ փոքր՝ բայց մաքուր եւ  
անդորր : Հարիւրաւոր խանութներ լեցուն  
էին մեծագին վաճառօք , եւ գործարանաց  
մէջ արհեստաւորք միշտ զբաղեալ էին  
գործով : Վերջապէս ժողովուրդը երջանիկ  
եւ բարենշան կ'երեւէր : Ճանապարհորդը  
մեծ հաճութիւն կը զգար բոլոր տեսած-  
ներէն , եւ քաղաքացիներէն մէկուն հետ

1547-02

Ա



2625

39

իսոսակցութեան մտնելով ըսաւ անոր, "Զեր  
քաղաքը շատ գեղեցիկ է, եւ ժողովուրդը  
երջանիկ եւ բարենշան կը դանեմ;" "Այո,"  
պատասխանեց միւսը . "մեր քաղաքը գե-  
ղեցիկ է, եւ շատ երջանիկ պիտի ըլլա-  
յինք, եթէ գետը չըլլար;" "Ի՞նչ գետ,"  
հարցուց օտարականը . "ես հոս գետ չտե-  
սայ;" "կայ գետ մը," ըսաւ միւսը, "խոր  
եւ սրբնիթաց գետ մը, որ քաղաքին մօտ  
դաշտին մէջէն կը վագէ ահոելի երեւոյթով.  
ուստի եւ անոր եզերքը կարգաւ խիտ առ  
խիտ ծառեր տնկած ենք գետը ծածկելու  
համար, քանզի չենք ուղեր անոր նայիլ,  
ոչ ալ անոր վրայ մտածել;" "Ի՞նչ վնաս  
կընէ ձեզի գետը," հարցուց ճանապար-  
հորդը զարմանօք եւ հետաքրքրութեամբ:  
Քաղաքացին անոր այս հարցմանը սա պա-  
տասխանը տուաւ . "Մեր երկրին թագա-  
ւորը յիշեալ գետին միւս կողմը կը բնակի,  
եւ կը պահանջէ որ մենէ ամէն մէկը,  
կանուխ կամ ուշ, այս խոր եւ սրբն-  
թաց գետէն անցնելով երթայ անոր քով:

Մենք առաջուց չենք գիտեր թէ երբ կը  
կոչէ զմեզ, բայց թագաւորին պատգամա-  
բերը երբ որ գայ, կը ստիպուինք երթալ:  
Երբեմն դիշերը կը կոչէ զմեզ, եւ պէտք է  
որ երթանք . երբեմն ալ այնպիսի ատեն  
մը կը կոչէ որ շատ զբաղեալ ենք գործե-  
րով, սակայն կը ստիպուինք անմիջապէս  
մեր գործերը թողուլ ու գետէն անցնելով  
երթալ;" "Ի՞նչպէս հնար է անցնիլ գետէն,"  
հարցուց օտարականը, "նաւակա՞ւ թէ ու-  
րիշ կերպով;" "Ոմանք կըսեն թէ անցնե-  
լու համար նաւակ կայ, ոմանք ալ կ'ըսեն  
թէ չկայ . ասոր վրայով ձեզի ստոյգ բան  
մը չեմ կրնար ըսել . սա միայն իբրեւ  
ստոյգ կ'ըսեմ թէ այն գետը մեզ կը դո-  
գացունէ . անոր վրայ խորհին անդամ  
մեզի մնձ անձկութիւն է . ուստի միշտ  
կը ջանանք, որչափ հնար է, անոր գտ-  
գափարը մեր մտքէն հանել: Անոր վրայ  
շատ քիչ կը խօսինք: Մենէ տմէն մէկը  
գիտէ թէ գետէն պիտի անցնի, երբ որ կը  
կանչուի . ուստի չենք ուղեր ժամանակէն

առաջ մեր խաղաղութիւնը վրդովել անոր լիշտակութեամբը," պատասխանեց քաղաքացին : "Թագաւորին գտնուած երկիրն ի՞նչպիսի տեղ է" ըստ օտարականը : "Ամէն մարդ կըսէ թէ շատ գեղեցիկ երկիր է . բայց այս մասին ալ քիչ բան գիտենք . անկէ հոս վերստին եկող մը չկայ որ մեզի այն տեղոյն վրայով լուր տայ : Թագաւորին մեզի դրկած խօսքէն գիտենք թէ շատ սքանչելի տեղ է , եւ թէ հոն մեզ ամենուս համար պատրաստուած բնակարաններ կան , բայց եւ այնպէս շատ քիչերը կը փափաքին հոն երթալ . ընդհակառակին զրեթէ ամէն մարդ աւելի կ'ընտրէ հոս մնալ . Ամէնքս ալ այն գետէն կը վախնանք :" "Ի՞նչու համար նաւակներ չեք շիներ կամ ուրիշ պատրաստութիւններ ըներ անցքը գերացընելու եւ զձեզ վտանգէն ապահով ընելու համար ." կը կնեց օտարականը : Այս հարցման վրայ քաղաքացին տհաճութեումք պատասխան տուաւ ըսելով . "Կ'աղաչեմ , տէր , այս նիւթին

վրայ այլ եւս վսօսինք . ժամավաճառ ըլլալ չեմ ուզեր , քանզի գործ ունիմ , մանաւանդ որ ձեզի ըսի արդէն թէ այս մամին շատ տգէտ ենք , եւ թէ այս նիւթին վրայ խօսելէ չենք ախորժիր . քաղաքավարութեան ալ դէմ համարուած է ասիկա խօսակցութեան նիւթ ընել : Եթէ այս նկատմամբ աւելի տեղեկութիւն ունենալ կ'ուղէք , դացէք ոս մարդուն՝ որ ինչպէս կը տեսնէք , տղոց հետ կը խօսի . նա ձեր ամէն հարցմանը պատասխան կու տայ , քանզի թագաւորին պաշտօնատարներէն է : Անաւեն օտարականը թագաւորին պաշտօնէին մօտենալով կը հարցունէ անոր թէ կը հաճի արդեօք քանի մը տեղեկութիւն տալ այն գետին վրայով որոյ համար կըսուի թէ քաղաքին մօտ է , եւ թէ ամէն քաղաքացի պէտք է որ օր մը անկէ անցնելով երթայ թագաւորին երկիրը որ գետին միւս կողմն է : "Ամենայն յօժարութեամբ ." պատասխանեց պաշտօնեայն . "Եթէ կը հաճիք ինծի հետ գալ քաղաքէն

դուրս քիչ մը հեռու, գետը ձեզի կը ցուցնեմ." Օտարականը գնաց թագաւորին պաշտօնատարին հետ, եւ դաշտին մէջէն անցնելով եկան լայնատարած եւ խորագուր գետի մը քով։

Օտարականն այն գետը տեսնելով զարհուրեցաւ եւ ըսաւ թագաւորին պաշտօնատարին. "Ստորյօ է որ այս քաղաքին բնակիչներուն ամէն մէկը պիտի ստիպուի օր մը անցնիլ այս գետէն," "Այո," ըսաւ պաշտօնատարը. "Թագաւորին հրամանն այս է," "Բայց հա՞րկ է որ անոնք ջուրին մէջէն անցնին. քանզի, ինչպէս կը տեսնեմ, գետին հոսանքն այնպէս ուժգին եւ արագ է որ զանոնք կրնայ առնուլ տանիլ։ Ուրիշ ձամբայ մը չկայ անդին անցնելով՝ առանց ջուրին մէջէն երթալու։" "Անտարակոյս կայ," ըսաւ միւսը. "Թագաւորն արդէն հոգ տարած է շինել տալ հաստատուն կամուրջ մը, յորմէ գետէն անցնող ամէն մարդ կրնայ միւս կողմն երթալ, եթէ կամմանայ։" "Կամուրջ մը."

գոչեց օտարականը. "Բայց ես այդպիսի բան մը չեմ տեսներ. քաղաքացիներէն մէկն ալ որուն հետ քիչ մը յառաջ կը խօսէի գետին վրայով՝ ամենեւին կամուրջի խօսք չըրաւ. թերեւս անոր վրայով տեղեկութիւն չունէր։" "Թերեւս," կրկնեց պաշտօնատարը. "Բայց, ինչպէս ըսի, գետին վրայէն անցնելու համար կայ կամուրջ մը, զոր թագաւորին որդին շինածէ, եւ ամէն մարդու հրաւէր կ'ընէ անկէ անցնելու։ Ստորյօ է որ քաղաքացիներէն շատերն զբաղեալ ըլլալով իրենց առեւտըրովը եւ ուրիշ հոգերով, զիտնալով եւս թէ իրենց կանչուելու ժամանակն անորոցէ, կամուրջին նկատմամբ ինչդիր կամ հարցուփորձ չեն ըներ, եւ եթէ երբէք անոր վրայով բան մը լսեն, շուտով կը մոռնան։ Արդարեւ կամուրջը քիչ մը հեռու է, եւ բաւական աշխատութիւն պէտք է զայն գտնելու. բայց այն է մի միայն ապահով ձամբան գետին միւս կողմն անցնելու։ Շատ, շատ մարդիկ չեն հաւատար

ասոր . կը կարծեն թէ կարող են անցնիլ զետին մէջէն քալելով կամ լողալով . այս պատճառաւ , երբ կը կանչուին թագաւորին եղած տեղը երթալու համար , կը ստիպուին այս վերջին ճամբան բռնել , այսինքն՝ հետի կամ լողալով անցնիլ . Այս տեսակ մարդիկ անտեղեակ են կամուրջին . եւ եթէ իրենց կանչուած ատենը կամուրջը գտնել կամենան , անօգուտ է , քանզի անցած է ժամանակը . ուստի կամայ ակամայ կը նետուին այն խոր եւ սրբնթաց ջուրց մէջ , եւ հոսանքին բըռնութենէն մղեալ՝ հարկաւ կը տարուին : Այս կողմը մնացողներն անդէտ ըլլալով գետին մէջէն անցնողներուն պատահած արկածից՝ իրենք ալ նոյն բանը կ'ընեն , երբ անցնելու կարգն իրենց կու զայ : Այսպէս կը կորսուին իրարու ետեւէ՝ առանց տեսնելու երբէք թագաւորին երեսը եւ անոր զեղեցիկ եւ փառաւոր արքունիքը .”

“Շատ ցաւալի է տոիկա ,” ըստ օտարականը : “Այս ,” պատասխանեց թագաւ-

ւորին պաշտօնատարը . “արդարեւ ցաւալի է , մանաւանդ եթէ խորհինք թէ ի՞նչ մեծ ծախիւք շինուեցաւ կամուրջը , եւ թէ քանի քանի անգամ թագաւորը կը դրէի իւր ծառաները քաղաքին բնակիչներուն լուր տալու կամուրջին վրայով , զգուշացընելու եւ խրատելու զանոնք որ ամէն մարդ փութով սորվի կամուրջին տեղն ու ճամբան , այնպէս որ եթէ յանկարծ կամ գիշերուան մէջ կանչուի , կարող ըլլայ գտնել զայն , եւ ապահով անցնի զետին միւս կողմը :

Նա մանաւանդ թագաւորը գիրք մ'ալ հրատարակել տուած է , յորում լիուլի տեղեկութիւն կը տրուի կամուրջին վրայով , եւ թէ ինչպէս կը գտնուի անիկա : Այս գիրքը քաղաքին գրատուններուն մէջ կը վաճառուի , բայց ցաւով կ'ըսեմ թէ շատերն անփոյթ են անկէ օրինակ մը գնելու , կամ , եթէ ունին , կարգալու ուշադրութեամբ :” Կապագացւոց այս անհոգութեանը եւ ապերախտութեանը համար թագաւորն ի՞նչ-

պէս չի բարկանար ,” ըսաւ օտարականը :  
 “Թագաւորը շատ վշտացած է . կը ցաւի  
 նաեւ այս ժողովուրդին վրայ ,” պատաս-  
 խանեց պաշտօնատարը , “քանզի կը սիրէ  
 իւր բոլոր համարակաները , եւ կը փափաքի  
 որ անոնք անվտանգ համնին իւր արքա-  
 յութեան մէջ անոնց համար պատրաս-  
 տած շքեղ բնակարանները : Այս պատճա-  
 ռաւ անոնց միշտ պատգամաւորներ կը  
 զրկէ , որոնք կը խօսին ժողովրդեան՝ կա-  
 մուրջին վրայով , եւ կը յորդորեն զանոնք  
 անոր օգուտը վայելելու :”

Եթէ մէկը հարցունէ թէ ո՞ւր է այդ  
 քաղաքը , եւ որո՞նք են անոր անհոգ բնա-  
 կիչները , կը պատասխանենք թէ այդ հար-  
 ցունողին բուն իւր բնակած քաղաքն է  
 այն , եւ հաւանականաբար ինքն ալ այն  
 անհոգ եւ ապերախտ բնակչաց մին է :



2013

Հայաստանի Ազգային գրադարան



NL0435464

